

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Կիպրոսի  
Հանրապետության կառավարության միջև ներդրումների  
խրախուսման և պաշտպանության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Կիպրոսի  
Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող  
կողմեր,

ցանկանալով ամրապնդել փոխշահավետության և  
երկարաժամկետ հիմունքներով երկու պետությունների միջև  
տնտեսական համագործակցությունը,

նպատակ ունենալով բարենպաստ պայմաններ ստեղծել մի  
Կողմի ներդրողների՝ մյուս Կողմի տարածքում ներդրումներ կատարելու  
համար,

գիտակցելով, որ սույն Համաձայնագրով նախատեսված  
ներդրումների խրախուսումն ու պաշտպանությունը կխթանի  
նախաձեռնությունն այս ոլորտում,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

### Հոդված 1 Սահմանումներ

Սույն Համաձայնագրի նպատակների համար՝

1. «ներդրումներ» տերմինը նշանակում է ամեն տեսակի գույք,  
որը մասնավորապես, բայց ոչ բացառապես ենթադրում է.

ա) շարժական և անշարժ գույքի, ինչպես նաև գույքի բոլոր ձևերի  
հետ կապված սեփականության այլ իրավունքներ,

բ) իրավունքներ, որոնք ստացվում են ընկերություններում  
ունեցած բաժնետոմսերից, պարտատոմսերից, տոկոսներից,

գ) դրամի, բարի համբավի և ցանկացած տնտեսական արժեք  
ներկայացնող գործողության իրավունք,

դ) մտավոր սեփականության իրավունքներ,  
տեխնիկական գործընթացներ և «նոու-հաու»:

Այս ներդրումները պետք է կատարվեն համաձայն գործող  
օրենսդրության ու կանոնակարգերի և այն Պայմանավորվող  
կողմի գրավոր թույլտվության, որի տարածքում ներդրումը կատարվում  
է:

Ներդրումների ձևերի փոփոխության դեպքում դրանց բնույթը չի փոխվի, եթե, իհարկե, այդ փոփոխությունները չեն հակասում Պայմանավորվող կողմերի օրենսդրությանը և կանոնակարգերին ու գրավոր թույլտվությանը:

2. «Եկամուտ» տերմինը նշանակում է՝

ա) ներդրումներից որոշակի ժամանակահատվածում ստացված գուտ գումարներ, ինչպիսիք են շահույթները, շահաբաժինները, տոկոսները, ռոյալթին և այլ վճարները,

բ) ներդրումների ամբողջական կամ մասնակի լիկվիդացումից ստացված գումարը, ինչպես այդպիսի ներդրումներից ստացված այլ գումարները, որոնք հյուրընկալող երկրի օրենքներով համարվում են եկամուտ:

3. «Ներդրող» տերմինը կներառի յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի՝

ա) ֆիզիկական անձանց, որոնք ունեն տվյալ Պայմանավորվող կողմի քաղաքացիություն՝ համաձայն վերջինիս օրենսդրության,

բ) իրավաբանական անձանց, որոնք ստեղծվել կամ միավորվել են համաձայն տվյալ Պայմանավորվող կողմի օրենքների, և որոնք ներդրումներ են կատարում մյուս Պայմանավորվող կողմի տարածքում՝ համաձայն սույն Համաձայնագրի:

4. «Երաշխավորող» տերմինը նշանակում է՝

ա) Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը,

բ) Պայմանավորվող կողմերի կառավարական կամ ենթակառավարական որևէ հաստատություն,

գ) Պայմանավորվող կողմերի որևէ այլ հասարակական կազմակերպություն, եթե կողմերը ունեն նախնական փոխհամաձայնություն նրա՝ որպես երաշխավորող հանդես գալու մասին,

դ) յուրաքանչյուր բազմակողմ հաստատություն, որն ընդունելի է երկու Պայմանավորվող կողմերի համար, և որին վերջիններս անդամակցում են համաձայն համապատասխան միջազգային կոնվենցիայի:

5. «Տարածք» տերմինը նշանակում է Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի ինքնիշխանության ներքո գտնվող տարածքը՝ ներառյալ տարածքային ջրերը և ծովերը:

## Հոդված 2

### Ներդրումների խթանում և պաշտպանություն

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կխթանի իր տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումները:

2. Այն ներդրումները, որոնք թույլատրվում են Պայմանավորվող կողմի տարածքում վերջինիս օրենսդրության և կոնոնակարգերի համաձայն, օգտվում են սույն Համաձայնագրի պաշտպանությունից:

3. Վերաներդրումներից ստացված հասույթները օգտվում են նույն պաշտպանությունից, ինչպես բուն ներդրումները:

### Հոդված 3

#### Ներդրումների բարենպաստության ռեժիմ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների նկատմամբ կապահովի արդար և անաչառ վերաբերմունք և անհիմն ու խտրական ձևերով չի խանգարի դրանց ընթացքին, ղեկավարմանը, պահպանմանը, օգտագործմանը, տնօրինմանը կամ օտարմանը:

2. Պայմանավորվող կողմերից և ոչ մեկը մյուս կողմի ներդրողի ներդրումների հանդեպ չի ցուցաբերի պակաս ապահովություն և պաշտպանություն, քան կստեղծեր որևէ երրորդ երկրի ներդրողի ներդրումների դեպքում:

3. Եթե Պայմանավորվող կողմը արտոնություններ է շնորհում երրորդ երկրի ներդրողին՝ համաձայն վերջինիս հետ կնքված մաքսային միության, տնտեսական միության և նմանատիպ հաստատությունների ստեղծման մասին համաձայնագրի կամ այդպիսի հաստատությունների ստեղծմանը վերաբերող ժամանակավոր համաձայնագրերի, այդ Պայմանավորվող կողմը պարտավորված չէ այդպիսի արտոնություններ շնորհել մյուս Պայմանավորվող կողմի ներդրողին:

Սույն Համաձայնագրով նախատեսված բարենպաստ պայմանները չեն վերաբերի այն հարկերին, վճարումներին, տուրքերին, մասհանումներին, հարկազատումներին, որոնք Պայմանավորվող կողմերը շնորհում են երրորդ երկրի ներդրողներին՝ համաձայն կրկնակի հարկման մասին, հարկային խնդիրներին առնչվող այլ համաձայնագրերի, ինչպես նաև երրորդ պետության հետ՝ փոխադարձության հիմունքներով:

### Հոդված 4

#### Բռնագրավում

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի ներդրողների ներդրումները մյուս Պայմանավորվող կողմի տարածքում չեն կարող բռնագրավվել, ազգայնացվել կամ ենթարկվել այլ կարգի

միջոցառումների, որոնք հավասարազոր են բռնագրավմանը կամ ազգայնացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

ա) տվյալ միջոցառումները բխում են պետական շահերից և համապատասխանում են օրենքի պահանջներին,

բ) այդ միջոցառումները արդարացված են, չեն կրում խտրական բնույթ,

գ) դրանք ուղեկցվում են արագ, համարժեք և արդյունավետ փոխհատուցմամբ: Այդպիսի փոխհատուցումը կիրականացվի՝ հաշվի առնելով ներդրումների շուկայական արժեքը նախքան հասարակությանը միջոցառումների հայտնի դառնալը, ազատ փոխանցվող կարգով փոխարկելի արժույթով՝ այն օրվա բանկային փոխարժեքով, որն ընդունելի կլինի արժեքի սահմանման համար: Փոխհատուցումը կընթանա առանց ուշացման, և տոկոսը կվճարվի մինչև վճարման օրը գործող համապատասխան կոներցիոն փոխարժեքով: Դրա չափը կարող է քննարկվել համաձայն գործող օրենսդրության:

#### Հոդված 5

#### Ներդրումների և եկամուտի ռեպատրիացիա

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կերաշխավորի Պայմանավորվող մյուս կողմի ներդրողների ներդրումների և դրանցից ստացված եկամուտի անսահմանափակ փոխանցումը: Փոխանցումը կկատարվի առանց ուշացման, ազատ փոխարկելի արժույթով՝ փոխանցման օրվա բանկային փոխարժեքով:

2. Այդ փոխանցումները մասնավորապես, բայց ոչ բացառապես ներառում են.

ա) ներդրումների պահպանմանն ու աճին ուղղված կապիտալ և լրացուցիչ գումարներ.

բ) շահույթ, տոկոս, շահաբաժին և այլ կարգի ընթացիկ եկամուտ,

գ) փոխատվության վճարման ֆոնդ,

դ) արտոնագրային և այլ վճարումներ,

ե) ներդրումների մասնակի և ամբողջական լիկվիդացումից կամ վճարումից ստացված հասույթ,

զ) Պայմանավորվող կողմի այն քաղաքացիների վաստակը, որոնք, ներդրումների հետ կապված, աշխատում են մյուս Պայմանավորվող կողմի տարածքում:

#### Հոդված 6

#### Սուբրոգացիա

1. Եթե երաշխավորողը փոխհատուցում է կատարում մի Պայմանավորվող կողմի ներդրողին՝ համաձայն մյուս Պայմանավորվող կողմի տարածքում նրա կողմից կատարված ներդրումների երաշխավորման կարգի, ապա վերջինիս կողմից պետք է ճանաչվի երաշխավորողի կողմից կատարված ներդրողի իրավունքների յուրաքանչյուր սուբրոգացիան: Իրավունքների սուբրոգացիան վերաբերում է նաև փոխանցումների իրավունքներին, որի մասին ասված է սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածում:

2. Փոխհատուցում և որևէ վճարում, ինչպես նշված է սույն հոդվածի 1-ին կետում, չի ազդի սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածով նախատեսված Պայմանավորվող մի կողմի այն իրավունքի վրա, ըստ որի վերջինս կարող է դիմել արբիտրաժին՝ Պայմանավորվող մյուս կողմի և իր միջև ծագած վեճը լուծելու համար: Երաշխավորողը կիրականացնի սուբրոգացիայի ենթարկված այն իրավունքները, որոնք կապված են երաշխավորման մասին պայմանագրով նախատեսված ռիսկի հետ, իսկ ներդրողը, որին իրավունք է ընձեռված օգտվելու այդ երաշխավորումից, կիրագործի բոլոր այն մնացած իրավունքները, որոնք նախատեսված չեն այդ պայմանագրով:

3. Ինչ վերաբերում է փոխանցված իրավունքներին, Պայմանավորվող մյուս կողմին իրավունք է ընձեռվում պահանջել ապահովագրված ներդրողի իրավունքներն իր վրա վերցրած երաշխավորից, որպեսզի վերջինս կատարի օրենքով կամ պայմանագրով նախատեսված իր պարտականությունները, ներառյալ հարկերը և այլ վճարումները:

4. Սույն հոդվածի կետերով նախատեսված սուբրոգացիայի դյուրացման նպատակով ներդրողն ու երաշխավորը համաձայնության են գալիս մյուս Պայմանավորվող կողմի տարածքում ապահովագրված ներդրումներին վերաբերող միջազգայնորեն ընդունված պրակտիկայի կիրառման առնչությամբ:

5. ա) Այն դեպքում, երբ երաշխավորը ընկնում է 1-ին հոդվածի 4-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում նշված դասակարգման տակ, վեճերը երաշխավորի և Պայմանավորվող մյուս կողմի միջև լուծվում են համաձայն սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածի:

բ) Այն դեպքում, երբ երաշխավորը ընկնում է 1-ին հոդվածի 4-րդ կետի «գ» ենթակետում նշված դասակարգման տակ, վեճերը վերջինիս և Պայմանավորվող մյուս կողմի միջև լուծվում են արբիտրաժային ձանապարհով, ինչպես սահմանված է սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածում:

գ) Այն դեպքում, երբ երաշխավորը բազմակողմ հաստատություն է, ինչպես նշված է սույն Համաձայնագրի 1-ին հոդվածի 4-րդ կետի «դ» ենթակետում, ապա վերջինիս և Պայմանավորվող մյուս կողմի միջև ծագած ցանկացած վեճ կլուծվի համաձայն միջազգային իրավունքի սկզբունքների և վերոհիշյալ կազմակերպությունը հիմնող միջազգային կոնվենցիայի համապատասխան կանոնների:

#### Հոդված 7

##### Այլ կանոնների կիրառություն

Եթե Պայմանավորվող կողմերի օրենսդրության դրույթները կամ միջազգային համաձայնագրերով սահմանված պարտավորությունները /ներկայումս գոյություն ունեցող և ապագայում սահմանված /, լինեն դրանք ընդհանուր կամ առանձնահատուկ, ներառում են մի քանի կանոններ, ըստ որոնց՝ մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի ներդրումների համար կստեղծվեն առավել բարենպաստ պայմաններ, քան նախատեսված է սույն Համաձայնագրով, առավելությունը կտրվի նշված կանոններին:

#### Հոդված 8

##### Պայմանավորվող կողմերի միջև ծագած վեճեր

1. Եթե Պայմանավորվող կողմերի միջև վեճեր են ծագում Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման վերաբերյալ, ապա դրանք հնարավորության սահմաններում պետք է լուծվեն խաղաղ և դիվանագիտական ճանապարհներով:

2. Եթե վեճն իր լուծումը չի գտնում բանակցությունների սկսման պահից վեց ամսվա ընթացքում, ապա Պայմանավորվող յուրաքանչյուր կողմի խնդրանքով այն կտեղափոխվի միջնորդ դատարան:

3. Միջնորդ դատարանը կձևավորվի հետևյալ կերպ. յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կնշանակի մեկ դատավոր, վերջիններս համաձայնության կգան երրորդ պետությունից նախագահ ընտրելու վերաբերյալ: Դատավորները կնշանակվեն վեճը միջնորդ դատարան տեղափոխելու իր մտադրության մասին մի Պայմանավորվող կողմի՝ մյուս Պայմանավորվող կողմին հայտնելու օրվանից հետո երեք ամսվա, իսկ նախագահը՝ հինգ ամսվա ընթացքում:

4. Եթե 3-րդ կետում նշված ժամանակաընթացքում անհրաժեշտ նշանակումները չեն կատարվում, Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը, առանց մյուս կողմի համաձայնության, կարող է հրավիրել Միջազգային դատարանի նախագահին՝ կատարելու

անհրաժեշտ նշանակումները, եթե դատարանի նախագահը Կողմերից որևէ մեկի քաղաքացի է, կամ առկա են համոզիչ այլ պատճառներ, որոնք թույլ չեն տալիս նրան իրականացնելու այդ գործառնությունները, ապա փոխնախագահին կամ, եթե նա էլ է Կողմերից որևէ մեկի քաղաքացի, կամ առկա են այլ համոզիչ պատճառներ, որոնք թույլ չեն տալիս նրան իրականացնելու այդ գործառնությունները, ապա՝ դատարանի ավագագույն անդամին, որը չի հանդիսանում Կողմերից որևէ մեկի քաղաքացի:

5. Միջնորդ դատարանը համապատասխան որոշում կկայացնի օրենքի՝ ներառյալ սույն Համաձայնագրի և Պայմանավորվող կողմերի միջև կնքված այլ համապատասխան համաձայնագրերի, ինչպես նաև միջազգային իրավունքում ընդունված նորմերի ու սկզբունքների հիման վրա:

6. Դատարանն ինքը կսահմանի դատավարության ընթացակարգը, եթե Պայմանավորվող կողմերը այլ բան չորոշեն:

7. Դատարանը որոշումը կկայացնի ձայների մեծամասնությամբ: Այն կլինի վերջնական և պարտադիր Պայմանավորվող կողմերի համար:

8. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ինքը կհոգա իր նշանակած դատավորի և ներկայացուցչության հետ կապված ծախսերը, նախագահողի, ինչպես նաև այլ ծախսերը հավասարաչափ կկիսվեն Պայմանավորվող կողմերի միջև:

## Հոդված 9

Պայմանավորվող կողմի ներդրողի և Պայմանավորվող մյուս կողմի միջև ծագած վեճերի կարգավորում

1. Մի Պայմանավորվող կողմի ներդրողի և Պայմանավորվող մյուս կողմի միջև ծագած վեճերը՝ կապված վերջինիս տարածքում կատարած ներդրումների հետ, Կողմերի միջև կլուծվեն բանակցությունների միջոցով:

2. Մի Պայմանավորվող կողմի և մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների միջև վեճը վեց ամսվա ընթացքում չկարգավորվելու դեպքում ներդրողը իրավունք ունի գործը հանձնել՝

ա) Ստոկհոլմի Առևտրի պալատի արբիտրաժին,

բ) Փարիզի Միջազգային առևտրի պալատի միջնորդ դատարան,

գ) Ներդրումների հետ կապված վեճերի կարգավորման միջազգային կենտրոն, եթե Պայմանավորվող կողմերը մի պետության քաղաքացիների և մյուս պետության միջև ծագած ներդրումների հետ կապված վեճերի կարգավորման 1965 թվականի մարտի 18-ի Կոնվենցիայի անդամներ են:

Հոդված 10  
Համաձայնագրի վերահսկում

Պայմանավորվող կողմերի ներկայացուցիչները անհրաժեշտության դեպքում հանդիպումներ կկազմակերպեն Համաձայնագրի իրականացումը վերահսկելու նպատակով: Այդ հանդիպումները կկայանան Պայմանավորվող կողմերից որևէ մեկի առաջարկությամբ, տեղի և ժամանակի վերաբերյալ դիվանագիտական ճանապարհով փոխադարձաբար ձեռք բերված համաձայնությամբ:

Հոդված 11  
Այլ դրույթներ

1. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը, հաշվի առնելով իր օրենսդրությունը և կանոնակարգերն ու ադմինիստրատիվ պրակտիկան, մուտքի և հանգրվանելու թույլատվություն կտա Պայմանավորվող մյուս կողմի ներդրողներին, դիմորդներին և աշխատողներին և բոլոր նրանց, ովքեր ընդգրկված են ներդրումների հետ կապված գործողություններում:

2. Պայմանավորվող կողմերը չպետք է խանգարեն կամ արգելեն մյուս կողմի տրանսպորտային փոխադրումները և, համաձայն իրենց օրենքների ու կանոնների, անհրաժեշտության դեպքում պետք է թույլտվություն տան ներդրումների աշխատանքների հետ կապված բեռների և մարդկանց տեղափոխության համար:

Հոդված 12  
Կիրառություն

Սույն Համաձայնագրի դրույթները կիրառելի են յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի ներդրողի՝ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում կատարած բոլոր այն ներդրումների համար, որոնք կատարվել են Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո:

Հոդված 13  
Ուժի մեջ մտնելը, գործունեության ժամկետը, դադարումը

1. Պայմանավորվող կողմերը կտեղեկացնեն միմյանց Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար պահանջվող ներպետական ընթացակարգերի կատարման մասին: Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի վերջին ծանուցումը ստանալու օրը:



2. Սույն Համաձայնագիրը կնքվում է 10 տարի ժամանակով: Այն կգործի այնքան ժամանակ, մինչև Պայմանավորվող կողմերից մեկը Համաձայնագրի գործողության ժամկետը լրանալուց առնվազն 6 ամիս առաջ ծանուցի մյուսին Համաձայնագրի գործողության դադարեցման իր ցանկության մասին: Համաձայնագիրը կդադարի գործել ծանուցումը ստանալու օրվանից 6 ամիս հետո:

3. Եթե ներդրումը կատարվել է նախքան Համաձայնագրի գործողության ընդհատումը, ապա Համաձայնագրի դրույթները կշարունակեն գործել ներդրումը կատարելու օրվանից հետո տասը տարվա ընթացքում:

Կատարված է Նիկոսիա քաղաքում 1995 թվականի հունվարի 18-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, հունարեն և անգլերեն, բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Մեկնաբանման ժամանակ տարաձայնության դեպքում որպես հիմք կընդունվի անգլերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1998 թվականի օգոստոսի 3-ից: